Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավատերություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել ստեղծագործությունը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1113 Բ

ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԴՌՆԱՊԱՀՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

№ 1

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՅԵՐԵՎԱՆԻ
ԳԱՎՔԱՂԳՈՐԾԿՈՄԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺՆԻ

ՅԵՐԵՎԱՆ 1929

ՀԱՅՔ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

Հաստատված է Աշխժողկոմատի և Ն. Գ. Ժ. Կ-ի հետ. և հաստատված է

ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԴՐՈՆԱՊԱՀՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մշակված և համաձայն Ցերքգղխորհրդի 1928 թ. ապրիլի 19-ի № 69 պարտադիր վորոշման.

Դրոնապահների պարտականությունն է՝

1. Հավաքել բակի, փողոցի և տան կից մայթի սալահատակի (արոտուարի) աղբը, փոշին, սառույցը և ձյունի կտորները։

2). Մաքրել ինչպես բնակարանների մուտքի, նույնպես և դեպի սրահներն ու նկուղները տանող ճանապարհը ձյունից։ Փորել ջրհոս առուների անցքերը (ջուրը հոսելու համար) նաև մաքրել տանիքների ջրհոս խողովակների ծերանները։

3. Հետևել շենքերի սանիտարական դրությանը պահպանել այնտեղ մաքրություն և կարգ, իր ժամանակին մաքրել բակի տանիքները, անբնակ ներքնատան միջանցքները, մաքրել իլյումինատորները, մաքուր պահել տանիքի տակի շինությունը, չթույլատրել այնտեղ բնակիչների մուտքը և իրեր պահելը, չթողնել բնակատեղերի պատշգամբների տակ ինքնայեռ գցելը ու մանղալներով կրակ անելը, հակել աղտահորերը ու աղբի արկղները իր ժամանակին դատարկելու։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—ա) Աղտահոտից և աղբի արկղից աղբ դուրս թափելը դռնապահի պարտականություն չէ։

բ) Վարչական բաժնին իրավունք է վերապահվում թույլատրելու առանձին տնատերերին կատարելու իրենց բակերին վերաբերող մաքրությունը՝ դռնապահների փոխարեն։

գ) Սույն կանոնադրության § 1-ին բակի մաքրումը §-րդ և 3-րդ ամբողջապես կատարումը դռնապահների պարտականությունների մեջ չեն մտնում, յեթե հիշյալ բակի տարածությունը տվյալ դռնապահի սպասարկման շրջանի մեջ չի մտնում։

4. Իրիկնամուտին վառել տալ դրսի լապտերը, բակերում յեղած ընդհանուր արտաքնոցների և փեղկերի (ռաստվորի) վրայի լապտերները ու հետևել նրանց կանոնավոր վառվելուն։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Սույն կետով նախատեսված պարտականությունն դրվում է այն դռնապահի վրա, վորոնք տվյալ շենքում են ապրում. մնացած տեղերում, վորտեղ առանձին բակեր առանձին դռնապահներ չունեն, լապտերները վառելու յեն տնատերերն, իսկ նրանց կանոնավոր վառելու հսկողությունը դրվում է պահակ-դռնապահի վրա։

5. Գիտենալ հրդեհաշեջ խմբի շենքի տեղը նաև նրա հեռախոսի համարը, տեղական քաղաքամասի Միլիցիայի և մոտավոր հեռախոսային ապպարատնե-

րի № №-ը, վորոնցով կարելի յե Հրդեհաշեջ Խմբին հարկ յեղած դեպքում ողնություն կանչել։

6. Հսկել վորպեսզի նորեկ տան բնակիչները իր ժամանակին տոմարագրվեն տնային գրքի մեջ և ընդհակառակը հեռացնողներին դուրս գրել, այդ մասին հայտնելով տնային վարչությանն, իսկ հարկավոր դեպքում նաև Միլիցիայի Վարչությանը։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—ա) Տնային գրքույկում տնային բնակիչների անունները մուծել ու դուրս գրելը դռնապահների պարտականությունը չե։

բ) Սույն կետով նախատեսված պարտականությունը դրվում և դռնապահի վրա այն դեպքում, յեթե տվյալ շենքը ունի առանձին դռնապահ։

7. Տեղեկություններ տալ տան և այնտեղ ապրող անձերի վերաբերյալ։

8. Զբաղվել բնակատեղերում սանդուխքների վրա և այլուրեք տան շենքերին վնասող աշխատանքները. յեղած դեպքում հայտնել տնային վարչությանը, այդպիսիներին պատասխանատվության յենթարկելու համար։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—§ § 7 և 8-ում նախատեսված պարտականությունները ընկնում է այն դռնապահների վրա, վորոնք բնակվում են նույն շենքերում։

9. Անմիջապես տեղեկացնել Տնային Վարչությանը վերացնել կամ վերանորոգել պահանջվող տնային սարքավորման յերևան յեկած փչացումների մասին։

10. Փողոցների մաքրությունը պետք է կատարել մինչև սովորական շարժումը սկսելը, Բաղխորհրդի պարտադիր վորոշումով սահմանված ժամերին։

11. Ինչ կվերաբերվի փողոցներում կարգ ու կանոնի և հասարակական հանգստի հսկողությանը, դռնապահները յենթարկվում են Բաղմասերի Միլիցիային (և Բաղխորհրդի № 60 պարտադիր վորոշման կետ 19) և պարտավոր են հերթապահություն տանել Տնային Վարչության սահմաններում՝ շաբաթական վեց ժամից վոչ պակաս տեվողությամբ՝ կատարելով Միլիցիայի բոլոր պարտականությունները։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Դռնապահների վերակարգի (նարյադ) բաժանումը կատարում է Բաղմասերի Միլիցիան, Տեղական Կոմիտեների հետ միասին, վորոնք և մշակում են որվա վերակարգը։

ՎԱՐՁՈՂԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

12. Վարձողները պարտավոր են տալ դռնապահին ծառայության համար բոլոր անհրաժեշտ պարագաները ինչպես որինակ ավելներ, ջրցաններ (լեյկի), թիներ, դույլեր, սավկաներ, քերիչներ, կրծքի նշաններ, ձեռնոց, սուլիչներ և այլն։

13. Ջուր տալ փողոցները ջրելու համար (ջուրը պիտի գտնվի տվյալ տնային վարչության մեջ։

14. Տալ իր ժամանակին Հայաստանի Կոմունալ Աշխատավորների Արհմիության հետ կնքած պայմանագրերի հիման վրա արտհագուստ, սահմանված նորմայով և վորոշված ժամանակամիջոցներում։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Յուրաքանչյուր զոնապահին տրվում է արտահագուստ վոչ ուշ քան նորերին գործի ընդունելուց 15 որ հետո և պայմանագրով նախատեսնված գործածության ժամանակից վոչ ուշ քան 15 որ անցնելուց հետո։

ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՎՃԱՐՈՒՄԸ

15. Աշխատավարձը տրվում է ամիսը յերկու անգամ հավասար չափով՝ 1-ին կես ամսվանը ավյալ ամսի 20-ին, իսկ 2-րդ կես ամսվանը հաջորդ ամսի 5-ից վոչ ուշ։

16. Ամեն մի 15 որվա աշխատավարձը տալիս՝ այն պիտի գրել հաշվեգրքույկում։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Հաշվեգրքույկներում գրելու տեխնիքական աշխատանքը կատարում է ապահովագրող տնատերը, համաձայնեցնելով այդ Տեղական Կոմիտեների հետ։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

17. Բոլոր զոնապահները պարտավոր են գիտենալ ներքին կարգապահության կանոնները և խստիվ ղեկավարվել նրանցով։ Վոչ վոք իրավունք չունի պատճառաբանել ներքին կանոնադրության կանոնները չիմանալը։

18. Ներկա կանոններով սահմանված բանվորական ժամի բաժանումը կարելի յե փոխել ամեն անգամ Հայաստանի Կոմարհմիության գիտությամբ և համաձայնությամբ և ԳԿՀ-ի համաձայնությամբ։

19. Բանվորական ժամանակի ընթացքում աշ-

խատանքը թողնել թույլատրվում է միայն հարգելի պատճառով (հիվանդություն, ընտանիքում պատահած դժբախտ դեպքերի և այլն)։

20. Հիվանդության, ընտանիքում պատահած դժբախտ դեպքերի և կամ այլ հարգելի պատճառներով գործի չհայտնվող դռնապահը պետք է իր չգալը հայտնի համապատասխան ներկայացրած փաստաթղթերով։

21. Դռնապահին տրվող գործիքների և արտադուստի քանակը (քանի հատ) և հատկությունը մուծվում է հաշվեգրքույկի մեջ, որպիսիք տնատիրությունները առանց վորևե այլևայլության պարտավոր են տալ դռնապահին։

22. Արձակելիս դռնապահը պարտավոր է տնային վարչությանը հանձնել իր ստացած բոլոր պարագաները։

23. Ներքին կարգապահության ներկա կանոնները անխտիր պարտադիր են բոլոր դռնապահների և նրանց վարձողների համար։

24. Դռնապահներն իրենց ծառայության ժամերին պետք է ունենան իրենց հագին սպիտակ գոգնոցներ։

ԴՌՆԱՊԱՀՆԵՐԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ՊԱՏԺԻ ՅԵՆԹԱՐԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ

25. Դռնապահներին, զանցառությունների և սույն կանոնները խախտելու համար, կարելի է յենթարկել հետևյալ պատիժների կարգապահական կարգով՝

ա) Նկատողություն (գրավոր).

բ) Խիստ նկատողություն.

դ) Հանդիմանություն նախազգուշացումներով, վոր կրկնվելու դեպքում կհեռացվի աշխատանքից։

դ) Կալանք մինչև 7 որ (Հիմք Քաղխորհրդի № 60 Պարտադիր վորոշման §§ 10, 11 և 12-ի խախտման դեպքերում)։

յե) Աշխատանքից հեռացնել։

26. Դռնապահներին կարգապահական պատժի կարելի յե յենթարկել հետևյալ դեպքերում։

ա) Առանց հարգելի պատճառների աշխատանքից ուշանալու կամ բոլորովին չներկայանալու դեպքում.

բ) Արտաժամյա աշխատանք կատարելուց հրաժարվելու դեպքում (վորպիսիք նախատեսված են Աշխ. Որենսդրքի § 104 և նրա ծանոթության կարգով)։

գ) Իշխանության ղեկավար մարմինների և հեռաքննական որգանների վորոշումներն ու կարգադրությունները կատարելուց առանց հարգելի պատճառների հրաժարվելու դեպքում։

դ) Գործիքները կոտրելու, փչացնելու կամ կորցնելու դեպքում, յեթե այդպիսիք տեղի յեն ունենում շնորհիվ դռնապանի անվուլթ վերաբերմունքից։

յե) Դեպի բնակիչները և այլ քաղաքացիները անկոորբեկտ վերաբերմունք ցույց տալու դեպքում։

զ) Բնակիչներն ու քաղաքացիները դեպի դռնապահները կոպիտ վերաբերմունք ցույց տալու համար յենթարկվում են պատասխանատվության, համաձայն Քրեական Որենսդրքի հատուկ պատասխան հոդվածի։

Վարչ Բաժնի Պետ՝ ԽԱՉԱՏՐՅԱՆ

6-ին ապրելի 1929 թ.
Յերևան

Հ 8563

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ ՏՊԱՐԱՆ

Գրառեպղվեվար 2154 բ. Պատվ. 3573 Տիրաժ 3000

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0045700

[034.]

A I/8567